

Եւ զուն պիտի ծընիս մոխրներէդ, իբրեւ փինիկ,
 Լուսավարս Աստուածունհին մեր Անցեալի մահաններուն՝
 Ուր առտըւան կը պաշտուէր կենսաբեր լոյսը հրաավառ:
 Ելի՛ր, կը սպասենք զբրան առջեւ մեծ Յոյսին,
 Ու մեր կուրծքերն իբրեւ վահան թըշնամական գրնդակներուն:
 Մեր կեանքէն վեր, մեր յոյսերէն, երազներէն դուն միայն կաս
 իբրեւ խորան պաշտամունքի, որպէս կըրակ և ատրուշան՝
 Որ տակաւին կողերուդ մէջ պիտ' ըսկըսի բոցավառի...
 Մն, հըսկաններն Արուեստին, իրենց գանկերն ոսկեծորան
 Պիտի պարպեն հոգիիդ մէջ իբրեւ թասեր ճառագայթի,
 Պիտ' ըլլաս մեծ ու գեղեցիկ, հըգօրագոյն, իբրեւ հանճար: —
 Ելի՛ր, պատուանդանէն պարզէ՛ ծալքերը զըրօշին՝
 Զոր յաւիտեան պիտի բըռնենք վեր, Աստղերուն և Արեւին...
 Ո՛ն, չե՛ս լըսեր, հիմին վըրայ կըռանիթէ կը քանդակեն
 Աղամանդեայ մուրճերով քանդակագործ նոր աստուածներ
 Հետեւեալ խօսքը ոսկետառ, «ո՛վ Հայրենիքն Ազատութեան...»

ԱՐՄԷՆ-ԵՐԿԱԹ

«Հայրենիքիս դպինները»
 (Անտիպ)

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ¹

Ս. Խաչի Ներքողը եւ Խաչի Շարակամները.
 Թէոդորոս Քուծեմաւոր եւ Սամալ կաթու
 դիկոս

Ծայրայեղ յունաբանութիւն մը՝ յատ-
 կանիչը կը կազմէ Քոթենաւորի գրու-
 թեանց: Իր սակաւաթիւ երկերու ընթեր-
 ցումը այն տպաւորութիւնը կու տայ մեզի,
 թէ անոնք ճեմական դպրոցի մը բեմէն
 արտասանուած են, հաւատացեալ աշա-
 կերաներու ակումբի մ'առջեւ՝ իբրեւ գոր-
 ծադրական օրինակներ իր վարդապետա-
 կանին:

Խաչի Ներքողեանը՝ իր մատենագրա-
 կան արտադրութեանց հրաշակերտն է:

Աստուածաշունչի երկար ընթերցումներու
 և որոճացած խորհրդածութիւններու ար-
 դիւնքն է որ կը նուիրէ Ս. Նշանին. «Այս
 քեզ իմոյ արտադրութեան քանից պտուղ,
 ո՛վ աստուածային ստար ըշան»²: «Քանզի
 շորչ ևկեալ ի խորհարդս անդաստանի մտաց
 իմոց, իբր ի չըկաղ և ի սքանչեղատես աս-
 տուածատունկ դարստատանաց, քաղեցի ըստ
 իրաքանիչս մարգարեական ոստոց գերեւեալ
 պտուղն կենդանութեան ի քեզ արքերեղով»³:

Խաչափայտի՝ դարերու պատմութեան
 մէջ, կատարած գործունէութեան դիւցազ-
 ններութիւնն է որ կը յօրինէ. և անոր
 վրայ՝ ապերախտ մարդկութենէն բեւեռեալ
 արարչի մը ստուերանկարին մէջ՝ կարծես
 իր անցելոյն ցուցադրութիւնը կ'ընէ մեզի:

1. Տես Բագմավէպ էջ 374.
2. Ներքողեանի Ս. Խաչն Աստուածընկալ. վ. ևն.
3. Ս. Վազար 1833.
4. Ներքող. էջ 170.

կայն ասով չեն դադարի իմաստ մը ե պարբերութիւն մ'ըլլալէ. մտածութեանց ճոխութիւնը գիտական այս միջոցին դիմեր է արտայայտուելու համար, կը տեսնուի հոն զօրաւոր գրչի մը զարկը, խստակեաց անապատաւորին առողջանութիւնը՝ որ ինքնուրոյն լեզուի մը ստեղծագործութեան մէջ, կը պարուրէ իր գոյութեան մոռացութիւնը:

Աշխարհաւորաց մարդոյն, ճգնաւորին՝ խորհելու ե խօսելու կերպն է. զայն հասկընալու համար, մտքի ամփոփածութիւն ե հոգւոյ արթնութիւն հարկաւոր է: Անկարելի է այս մեծ վանականին դիմանկարին առջև կեցած չի յիշել Ս. Հերոնիմոսը որ ինքզինքը կամաւ երբայական լեզուին դժուարութիւններովը կը մարզէր միանձնական կեանքին:

Հիացումը՝ միութեան կապն էր վարդապետին ե աշակերտին մէջ. ամէնքը կը ջանային անոր հոգեկան ե մտաւորական ձիւրքերէն բան մը մարմնացնել իրենց մէջ: Այս մասին Քովինաւորին երկու արժանաւոր հրաշակերտներն են վերոյիշեալ հայրապետները, մին իմաստասէր ե աստուածաբան, Աթնասաներու արժանաւոր մրցակից. միւսը քերթողականին մէջ այնքան վարդապետին նմանեցաւ, որ շատ անգամ կը թուի անոր խորհրդական զաղափարներուն թարգմանն ըլլալ. ապացոյց՝ խաչի շարականները որոնց համեմատական պատկերները կու տանք հոս:

Շարական էջ 15

Յանադարձաբեր արմատ փայտիմ. մակադրեալ զքեզ անգլեի հեղմամբ ե սեւեռեալ բեռնօք, ե ի հրացայտ հողի քո ի ծնունդ զիմու տիգի հոս սամս վտակաց զործնցերն:

Ճառ էջ 160

Իւ ետ ընդ ետ վերտանալ սեւեռաղոյն ե մակափր ենթակացութեամբ, դիպատեսակ անշքոթելի բնութեամբ աստուածութեան մակաղբիւյ ի քառեակ փայտմ, զանորեկեալն արտաշնչեաց հողի, զիմոնաւ:

րեայմ ի տիգարուիս ե վտակահոս կենդանութեամբ, ի մեզ գոյով աղբիւր ջրոյ խաղացելոյ յալտեմմի կենդանութեամբ:

Քրիստոսի խաչի վրայ բեռեկուն ե կողէն բղխած ջրին վրայ կը խօսին, զանազան բացատրութիւններով ե նմանութիւններով:

Շարական էջ 162

Արեւիք ի դրախտիմ ըմծայեցիմ զփայտ խաչիմ ե եկեալ կատարիս ի տեղով կառափման, բարձրանայր ի դիտին տարրեղէն փայտակերտն սուրբ քառաթև պահապամ ամծամց միերոց,

Ճառ էջ 161

Ով ճշմարիտ աստուածային առնէ, արեւելաբոյս արմատ ըմծիղեալ սաղարթածաղիկ ե կենդանատեսակ զօրութեան, իմանալի պտուղ անբան կենդանի, քառաթև Սշմալ, ամբարառտ քարիխօս զքէմ կախեցելոյ բամիմ Աստուծոյ:

Թէ շարականին ե թէ ճառին մէջ տիրող մտածութիւնը խաչափայտի հայրենիքն է. ե վրան կախուած աստուածային իանին շնորհիւ ստացած զօրութիւնը:

Շարական էջ 1016

Ճառ 164

Երկմաշփ ցուցաւ սամզուիք իմամալի ճառապարի մարդկան ընդ դուռն կեմաց մտիմ. քամզի խորհրդեամբ ցուցաւ սքանչելոյմ Յակոբայ. երկմաւոր զօրացմ էջք ե ելք արարամ:

Ով սքանչելի սուրբ փայտ, աստուածազարդեալ իմամալի սամզուիք յերկիմս բարձրացեալ զնոյն ինքն զՔրիստոս պայծառ ճառապարթիւք ջանափայտալ արփեկիդ փայլմամբ, զարեզակն արդարութեան ի քեզ պսակ ունելով ճատատեսալ առեքիւնով զփրկութեան ամենայն աշխարհի. ըստ որում մախկնմ տեսեալ զքեզ սքանչելի կոյրայ ճամապարի վերելիցոյ յերկիմս առաջայր, ե դուռն երկմից ամուսնալ իջելոց դասուց կամառացմ հոյակապ, ե զուսմացմ ժողովոյմ երամ երամ ի:

1. Բոլոր խաչի շարականները Սահակ կաթողիկոսին չեն. ուրիշներ ալ դիմում են Քովինաւորին երբորդէն յաջորդութեամբ զեղաշնչուած են երգեր, ինչպէս Ստեփանոս Ապարանցի Մոհակ եպիսկոպոսին (Թ. դար) Սրբուհիմ սրբոցմ որ իբրեւ երկերորդ օրհնութիւն կ'երգուի խաչի ութօրէից շրջորդ օրը (շարական էջ 1016), ձորս

ըստ պատկերի քումը (շարական էջ 846) Մազեա սուրբի գործ չէ. այլ Առտո իշխանին, ժամանակակից Սահակ կաթողիկոսին (ՏԵ՛ս Աւետիքեան բացատրութեան շարականաց էջ 521):

2. Ստեփանոս Սիւնեցւոյն Երուսթեան Ասագ օրհնութիւններէն է այս առնել:

չելոց հրեշտակացն յերկիր առ միութիւն վերնոց և ստորնայնոց, հրաշաշաւիդ և կատարեալ ուղեկցութիւն զկնի աստուածային ժայնին...

Այս համամատութեանց մէջ խաչափայտը կը նմանցնեն Յակովբայ տեսիլքին խորհրդական սանդուխին, որուն միջոցաւ երկինք և երկիր հաղորդակցութեան կը մտնեն:

Շարական էջ 1024

Ճառ էջ 165

Դասազանաձև երևեալ հզօրիւտական ազգի մ, դուրսանելով զգործութիւն որոշ խաչին յափշտակելով զգաւազանսն դիւթական...

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ և հրաշաշաւիդ գաւազան, արեւափառ Նշյուլի, լուսաձին և արփի ճառագայթ, ամենազան և պէս պէս զուտակ գունակ զարմաւազակ Նեաւ, որ փոխանակ գաւազանին որ ի ծնող մարգարէի՝ որում ըզպարտացեալ ամբարտաւանութիւն եզիպտական սատակմամ տան. չիսլ պէտպէս և ազգի ազգի հարուստով:

Դորոշմ զգայութեան օրինակեալ ի վերայ սեւոց զրամց մոցա, ամերկիւ պահելով զգործովորդն յամերկեակածայն սատակմամ էն

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, աստուածամեծերկ դորոշմ... որ փոխանակ գաւազանին արեւաշաղկապ արեւմտ զորոշմայն զսեւամբ որդուցն իսրայէլի, միամզամայն առնաւարական եղեն զերեւելոյ ի բարկութեան աստուածային սրոյն:

Երկեւաւ աղիւսանման ալիս պատուական ի ձե խաչին. հերձանելով ըզծովմ կարմիր առաջնորդելով ժողովորդեանն սեւամբ աւապոյ լոյսն ամմեկմեկի

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ և սմպատեսիլ սիւն կայծակնաբորբոր ծառագայթիւքն պայծառացեալ ի յերկրի. ծամապարհմթաց և առաջնորդ ուղղութեան րամակամորմ աստուածատեսակ ըմտորդութեան իսրայելի՝ յաւետապարհի երկիրն անտեսաց, ընդ թեզ միջեալ յարեակ ի կանա ընտաւ րակն լոյս:

Երկու հեղինակներն ալ խաչափայտին զօրութեամբ կատարուած երեք համառաւոր դէպքեր կը նշանակեն 1^օ Մովսիսական գաւազանին սքանչելիքները, 2^օ Եզրայացւոց անդրանիկներու սատակումը 3^օ

Կարմիր ծովու անցքը դէպ ի աւետեաց երկիրը:

Շարական էջ 161

Ճառ էջ 165

Դորոշմ զգայութեան և կնիք ի դէմս ամմից. դու և յաստուածայնսն կատարիս խորհրդ յորմէ արեւաշալին փայլեն ճառագայթք:

Իսկ զու, ո՛վ աւետար և զսեմարփի աստուածային Նշանի զօրութիւն անպարտեւ, պատկեր և կնիք ի դէմս ամմից հաստատեալ:

Էջ 170. — քն օրոմիմ խորամաշէմ յարկը սուրբ եկեղեցւոյ:

Քն բաշխ ի փրկական մարմին և արեւն ի վերայ քն պատարագեալ:

Ս. Նշանին կիրառութիւնները կը թըւարկեն. քրիստոնէական շրջանին մէջ Նախ իբրև կնիք երեսաց, երկրորդ իբրև օրհնիչ եկեղեցական խորհուրդներուն մէջ:

Շարական էջ 162

Ճառ էջ 165

Սա է զէն յաղթութեան սրեալ արեւմբ որդւոյն Աստուծոյ,

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ... զէն և կնիք հրատեսակ պարծեցւորս ի թեզ սրամիտեալ արեւմբ որդւոյն Աստուծոյ

Սա է աթոռ տէրութեան և ի սմա է բազմալ Քրիստոս Որդին Աստուծոյ:

Էջ 163. — Ո՛վ սքանչելի փայտ, և աստուածազարդ տապան, իմա՛նալ ի խորհուրդ ծածկեալ...

Սա է սեղան սրբութեան և ի սմա է պատարագեալ Քրիստոս զառն Աստուծոյ

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, աստուածանկերտ և իմանալի սեղան... ամամի զեմման որդւոյն Աստուծոյ կամաւոր պատարագիմ:

Առաջին սուներուն մէջ նմանութիւնները շոշափելի են, երկրորդին մէջ փոխաբերութեանց զանազանութիւն կայ. շարականը՝ խաչափայտը՝ Քրիստոսի բազմելու զահը կը համարի. իսկ ճառը՝ հանգրտեան տապանը: Երրորդ սուներուն մէջ որքան բառացի փոքր նմանութիւն՝ նոյնքան իմաստի նոյնութիւն կայ:

Շարական էջ 1029

Ճառ էջ 167

Ցօղաբարձ մպատակ օրինակեալ քառաթև սուրբ խաչին, ծնացուցանելով իսրայէլ յետմ քամակին զօմ պղծմի. ապիցոյցամի

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ աստուածաբերեալ իմանալի պատկեր արեւաշալի քառաթև սուրբ խաչին, կենդանատեսակ զօրութիւն, որ իբրու րու:

զվիրաւորեալսն ի խա-
ծամող սողնոց թումից.

սամեղով յերկրի՝ բար-
ժրացեալ ծայր արծա-
կեցիք ընդ քառատեսակ
ծաւցեալ ամիլիւս եր-
կրի. ամկասկած յապտ-
կամող օժէմ, յորժամ
խածամէր զզովմարտա-
կամ ժողովն զուսարումն
բանակին հակաճառեալ
ներհակութեամբ ընդդէմ
հարկամող օժիցն...

**Անապատին մէջ Մովսէսի կանգնած
պղնձի օձին հրաշագործութիւններու պատ-
մութիւնը կ'ընեն:**

Շարական էջ 1016

Փայտ կենաց զսա Հոգ-
ւոն վերակոչեաց զերա-
հրաշ իմաստունն. քանզի
արարիչն արարածոց՝ բար-
ժրացաւ ի սմա....

Ճառ էջ 168

Ո՛վ սքանչելի սուրբ
փայտ իմանալի թագ ար-
քունական, նախաձայնեալ
քեզ հոգիներեկ երգողին,
յորում բարձեալ զաւաւոր
և զպայծառ զքեզազդեալ
զգուրին զՔրիստոս:

Երկուքն ալ կը յիշեն Սողոմոն ի-
մաստնոյն նախագուշակած խաչափայտի
գօրութիւնը որուն վրայ բարձրացաւ, կ'ըսէ
շարականը «արարիչն արարածոց» և ճառը
«բարձեալ զՔրիստոս»:

Շարական էջ 161

Ո՛վ քառաթև լուսա-
ծիմ զերապամծ միշ-
կառուցող կենացն ամենից,
միշտ բազկատարած առ
քեզ էմ.

Ճառ էջ 163

Ո՛վ.... քառաթև սուրբ
մշտն.... որ զկենդանիմ
ամմանց քամն աստուած
ելով էականութեամբմ.
... հեղուեսեալ ընդ քեզ
իւրով զերա՛ բարձրու-
թեամբն.

էջ 160. — Զև ազատե-
ցաւ մախաճայրմ ի ցա-
շակամէ պտղոյմ.

Զև քացաւ մեզ ցա-
մապարծ ծառոյն կենաց
ի սրովրէափակ պահ-
պամութենէն.

էջ 169. — Զև լուծեալ
բարձաւ քրտմաքեր ա-
միծաղըրութիւմ Աղա-
մայ.

Զև քացաւ սրովրէա-
փակ աղիեալ դուռն
զրախտիմ կենաց.

**Նմանութիւնները բառացի են. մեկնու-
թիւն մը աւելորդ պիտի համարուի:**

Շարական էջ 159

Յորժամ յարկեցից
փայլիս անճառ լուսով
լուսաւորեալ զհաւատա-
ցեալն և զատապարտես
զազգմ չրէից ամհաւա-
տից ո՛վ սուրբ քառաթև.

Ճառ էջ 170

Քև փայլէ միւսանգամ
զաւուստ Որդւոյն Աստու-
ծոյ, անճառելի ճննեալմբն՝
արևելյամշտմ ցառա-
զայթիլք աստուածատե-
սակ մարմնով՝ տամբիալ
ի միասին առ հասարակ
դատիմ ազգմ չրէից ամ-
հաւատից.

**Ս. Խաչի ամենավերջին օրուան արեւ-
ւելքէն երկիրը կը նկարագրեն որ իր փայ-
լովն հաւատացեալներուն լուսաւորութիւն
պիտի ըլլայ և Հրէից զատապարտութիւն
իրենց անհաւատութեան համար:**

Հ. Լ. ԱԹՃԵԱՆ

Շարայարեի

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՔԱՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

I.

ԳԵՂՈՆ ՆԱԽԱՍԱՐԻ

Նաւասարդ,

Մեր հեթանոս Անցեալին տօնը զըւարթ,
Քաղցըր էիր, և Առաւօտը ոսկի
կը ծիծաղէր արծաթալիք առուակի
Հայեւոյն մէջ՝ ուր զիցուհի մը սիրուն
կ'երկարէր դողը ծիրանի լոյսերուն:

Նաւասարդ,

Ո՛վ հեթանոս մեր Անցեալին գողտրիկ
զարդ,

Օ՛ ծուխերուն բարձրաճալը թեթև
Առաւօտեան օդին մէջէն լուսաթև,
Օ՛ սրբինգներն՝ որոնց նըւազը մեղմիկ
կը խառնուէր զգիւններուն հանդարտիկ:

Նաւասարդ,

Հովուերգութիւն, և Արշալոյս՝ գեղազարդ,
Օ՛ կայտըռնէն այծեալներուն հեզանցիկ,
Ծառերուն տակ, ըստուերին մէջ թափան-
ցիկ,

Եւ Անահիտը՝ պաշտելի՝ զիցամայր,
Օ՛ ջրբեր խումբը կոյսերուն սարէն վար...

Նաւասարդ,

Ո՛ տայր որ դու Հայրենիքի մը զըւարթ
վերածնող գեղեցկութիւնն ըլլալիր,
Ու քեզ համար իմ քրնարէն նետալիր
Դեռ փախչէին գողթան երգեր Անցեալի,
Հին Առաւօտ, հրապոյրներդ այնքան լի...

«Հայրենեքի զփնէները»

(Անտիպ)

ԱՄՍԷՆ ԵՐԿԱԹ